Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 28.04.2021թ. թիվ 2112641472 որոշման հիմքում դրված փաստական հանգամանքների դեմ բերված գանգատն առանց բավարարման թողնելու մասին

<<18>> 05 2021թ. 7–13 8062 ք. Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Գեորգի Խուրշուդյանի ՄԴ/39881-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Քաղաքացի Գեորգի Խուրշուդյանը (**ծանուցման հասցե**՝ քաղաք Երևան, Էրեբունի վարչական շրջան, Նոր Արեշ 44 փողոց, 73 տուն) դիմումով խնդրել է անվավեր ճանաչել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112641472 որոշումը՝ նշելով, որ իրավախախտումը կատարել է ավտոմոբիլի անսարքության պատճառով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գեորգի Խուրշուդյանը ճանաչվել է որպես իրավախախտում կատարած անձ, ուստի նրա կողմից ներկայացված գանգատը ենթակա է քննության:

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները: Նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է իրավախախտման հատկանիշների պարզման և վարչական ակտի ընդունման փուլերից:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 7-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ լուսացույցի կարմիր ազդանշանն, այդ թվում նաև՝ թարթող, արգելում է երթևեկությունը: Նույն որոշման 18-րդ կետի համաձայն՝ լուսացույցի (բացի դարձափոխայինից) կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի «Կանգ-գիծ» գծանշման (կամ

6.16՝ «Կանգ-գիծ» նշանի) առջև, իսկ դրա բացակայության դեպքում՝ հատվող երթևեկելի մասի առջև՝ հաշվի առնելով կանոնների 93-րդ կետը, խոչընդոտ չստեղծելով հետիոտների համար, ինչպես նաև այլ վայրերում՝ լուսացույցի կամ կարգավորողի առջև՝ խոչընդոտ չստեղծելով թույլատրելի ուղղություններով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտների համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր:

Նյութերի ուսումնասիրությամբ պարզ է դառնում այն փաստը, որ 12.04.2021թ. ժամը՝ 16:16-ին Երևան քաղաքի Փափազյան - Կոմիտաս փողոցների խաչմերուկի հատվածում առկա է <<Կանգ-գիծ>> գծանշումը և <<VAZ>> մակնիշի 630L858 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցի վարորդի կողմից այն հատելու պահին միացված է եղել տվյալ երթևեկության գոտին կարգավորող լուսացույցի կարմիր ազդանշանը:

Այսպես՝ տեսանյութի 16:16:09-րդ վայրկյանին միանում է լուսացույցի դեղին ազդանշանը, իսկ 16:16:12-րդ վայրկյանին՝ միանում է լուսացույցի կարմիր ազդանշանը, երբ դիմումատուի տրանսպորտային միջոցը գտնվում էր <<Կանգ-գիծ>> գծանշման առջև: Դիմումատուի տրանսպորտային միջոցը <<Կանգ-գիծ>> գծանշումը հատում է տեսանյութի 16:16:22-րդ վայրկյանին, երբ շարունակվում էր միացված մնալ լուսացույցի կարմիր ազդանշանը:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

Վարչական վարույթի ընթացքում չի հիմնավորվել իրավախախտումը ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարած լինելու հանգամանքը՝ անբավարար փաստական ապացույցների պատճառով:

Ինչ վերաբերվում է դիմումատուի այն պնդմանը, որ իրավախախտումը կատարել է ավտոմոբիլի անսարքության պատճառով, ապա այն վարչական ակտը բեկանելու հիմք չի կարող հանդիսանալ, քանի որ ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 2-րդ հավելվածի համաձայն՝ տրանսպորտային միջոցի անսարքության դեպքում այն շահագործելն արգելվում է:

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասի զանցակազմը:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասով և 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 28.04.2021թ. թիվ 2112641472 որոշման հիմքում դրված փաստական հանգամանքների դեմ բերած գանգատը թողնել առանց բավարարման:
2. Հանձնարարել ՃՈ ՏՄՀԻՎԳՔ բաժինին, Գեորգի Խուրշուդյանի անվամբ կայացնել նոր վարչական ակտ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
4. Սույն որոշման օրինակն ուղարկել Գեորգի Խուրշուդյանին և ՃՈ ՏՄՀԻՎԳՔ բաժին:

Ե.Կարապետյան

Կատարող Ա.Ալեքսանյան
Հեռ.՝ 011-544-783